ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1499-Ա « 20 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի Հ.3926-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով քաղաքացի Լուսաբեր Բաբայանի՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները (13.11.2025թ. հ.Դ-126110-25, 09.02.2026թ. հ.Դ-11254-26).

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 25-ի «Երևան, Կենտրոն, Անտառային փողոց հ.178 հասցեում սեփականության իրավունքով Լուսաբեր Գրիշի Բաբայանին պատկանող և Անտառային փողոց հ.178/1, հ.178/3 հասցեներում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ իրականացված կառույցներն օրինականացնելու մասին» հ.3926-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Երևան, Կենտրոն, Անտառային փողոց հ.178 հասցեում սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.12112025-01-0449 վկայական) քաղաքացի Լուսաբեր Գրիշի Բաբայանին պատկանող հողամասում ինքնակամ իրականացված 168.7քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի տուն՝ 65.1 քառ.մետր, օժանդակ շինություն՝ 98.2 քառ.մետր, պարիսպ՝ 5.4 քառ.մետր), ինքնակամ բացված պատուհանները՝ 2 (երկու) հատ ճանաչել օրինական:»:

2) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում՝ «1218858 (մեկ միլիոն երկու հարյուր տասնութ հազար ութ հարյուր հիսունութ)» բառերը փոխարինել «1233308 (մեկ միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր ութ)» բառերով:

2.Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարի Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գումարների տարբերությունը՝ 14450 (տասնչորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ